*Այլ աւելի քան զնոսին:*
*Հինգ բիւր՝ որ է յիսուն հազար,*
*Էր սորա զաւրքն ընդ նոյն համար.*
*Զի երեսուն էր Թամուրին*
*Ի՛ այլ աւելի քան ըզնոսին:*
*Բայց ոչ ունէր սա չարութիւն,*
*Այլ բարեսէր հանդարտութիւն:*
*Ցորմէ սարսափան ազգ Թուրքմանին*
*Վասն իւր չարեացըն զոր ունին.*
*Զի անողորմ էր ու՚անիրաւ,*
*Անմըրուած ու՚ անշաղուած,*
*Անդատաստան և անհաւատ,*
*Պիղծ, չարագործ խսկ և տըմարդ,*
*Անպատկառ և անամաւթ,*
*Մեղաց աման, չարեաց անաւթ:*
*Փառք Աստուծոյ զոր ինչ արար*
*Ընդ Թուրքմանին չարեացն յարմար.*
*Քանզի խըրան նախ և փախեան*

---

307. «Սարսափան»—այսպէս մեր օր. Թերևս՝ սարսեան:

310. Երկու արաբ. բառեր հայ ան բացասականով. դոցանից առաջինը նշանակում է անադարոյն, անգութ, և երկրորդը՝ անսիրտ, անխիղճ:

317. «Խըրան»—այսպէս մեր օր. արդեօք՝ խռեցան: